№ 39 ՀԻՆԳՇԱԲԹԻ — 1883 — 19 ՄԱՅԻՍԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հրատարակվում են շաբաթը երեք անգամ։

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 1 րուբ.

ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրատունը բաց է 2—5 ժամը կէս օրից յետոյ։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն, ռուսերէն և Թուրքերէն լեզուներով։

Յայտարարութիւնների համար վճարվում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — մի անգամ, 3 կոպ. — երկու անգամ իսկ մնացած անգամների համար պիտի աւելացնել կէս կէս կոպէկ։

Խմբագրատունը գտնվում է Երևանում, Աստաֆեան և Բէհբութեան փողոցների անկիւնում, Եմին Տէր Գրիգորեանցի տարանում։

ԼՐԵՐ

ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ թագադրութեան լուրը կայծակի արագութեամբ ամսոյս 15-ին երեկոյեան 6 ժամին տարածուեցաւ Երևանում. ամեն մի ջերմեռանդ հպատակի սիրտ բաբախեց ուրախութեան և երախտագիտութեան զգացմունքով, ամեն մի անհատ իւրեան բախտաւոր էր համարում տօնել այդ նշանաւոր և ամենքիս համար ցանկալի հանդէսը։ Հետևեալ օրը առաւօտեան քաղաքը զարդարուեց դրօշակներով. սպիտակ, կապոյտ կարմիր գոյները տատանում էր թեթև զեփիւռանման քամու ազդեցութեան տակ։ Տեղական խորհրդարանում կայացած վճռների համաձայն՝ սուրբ պատարագից յետոյ Հայերը, Ռուսները և Պարսիկները քաղաքային հրապարակում մի փառաւոր մօլեբէն կատարելուց յետոյ՝ խուռն բազմութեամբ գնացին Անգլիական այգին, ուր փառաւոր նախաճաշ էր պատրաստած ամեն դասակարգի համար։ Այդ տեղ խօսուեցան ճառեր տօնելի հանդիսի առթիւ, և անվերջանալի „ուռա„ներով ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ թանգագին կենաց երկարատևութիւնն էին մաղթում։ Դորանից յետոյ՝ փողոցներում համարեա ամեն մի քայլում տեսնվում էր մի առանձին խումբ, որը երգելով, պարելով, ուռաներով և անհամար գինու շշեր դատարկելով, անցնում էին։ Երեկոյեան, քաղաքային երկու այգիներում մի գեղեցիկ ճրագալուսութիւն կատարուեցաւ, կիսաեւրոպական և կիսաասիական ճաշակով. բիւրաւոր լապտերներ, բենգալեան կրակներ, գեղեցիկ և մեծածախք փամփուշտներ (фейерверки, որը կատարուեցաւ միւս օրը քամու պատճառաւ), վէնզէլներ և այլն և այլն։ Քաղաքը նոյնպէս լուսաւորուած էր տեղացիների խնդրանաց համաձայն իւրեանց ծախքով. մի խօսքով վստահ կարելի է ասել, որ Երևանը այսպիսի հանդէս, չենք ասում տեսած, այլ երազած չէր։ Շնորհակալութիւն ենք յայտնում նաև մեր տեղական ոստիկանութեանը, որոյ շնորհիւ և էնէրգիայով մի թեթև անկարգութիւն անգամ չպատահեց այդ անհամար և ըստ մեծի մասին գինու ազդեցութեան տակ մնացած ամբոխի մէջ։

—

Տեղական խորհրդարանում Սրբազան թագադրութեան առթիւ մի քանի տեղի ունեցած նիստերում ի միջի այլոց վճռուել է և հետևեալը։

1, Թագադրութեան հանդիսին քաղաքի կողմից ներկայացնել ՆՈՅԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ մի ոսկեզօծ շքեղ ափսէ և մի աղաման 900 մէթ. արժողութեամբ.

2, Բաշխել 5000 ր. քաղաքին հասանելի այն ապառիկներից, որոնք մնացել են հասարակութեան ամենաաղքատ դասակարգի վերայ։

3, Տեղական գիմնազիայում պահել քաղաքի հաշվով 5 ուսանող երկուսը հայերից, երկուսը պարսիկներից և մէկը ռուսներից։

4, Երևանի Աստաֆեևսկայա փողոցը և Անգլիական այգին վերանվանել Ալէքսանդրեան, իսկ Սուլէյմանխանսկայա փողոցը-Աստաֆեևսկայա։

—

Շնորհակալութեամբ ստացանք „Գործ„ ամսագրի Երկրորդ տարուայ առաջին համարը, որը բաղկացած է 16 երեսից։ Այս համարը հրատարակուած է, ինչպէս ասում է պ. խմբագիրը, միայն հրատարակութեան իրաւունքը չկորցնելու համար, իսկ կանոնաւոր հրատարակութեան համար՝ արդէն պատրաստութիւն է տեսնվում։ Ի սրտէ ցանկանում ենք յաջողութիւն։

—

Մշակը հեռագիր է ստացել Մայիսի 7-ից, որ նոյն օրը պաշտօնապէս յայտնուած է, Բագու—Թիֆլիսեան երկաթուղու բացումը։

—

Թագադրութեան մեծ տօնի առթիւ, թերթիս սոյն 39 համարը այսօր հրատարակուեցաւ։

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ԵՒ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶՐՈՅՑՆԵՐ

Մի քահանայ կանգնած է հրապարակում, պանիր ծախող Թուրքի մօտ և կամենում է նորա պանիրը գնել։ Նկատում է, որ պանրի իւղը քաշած է։ Թուրքը երդումներով հաւատացնում է քահանային, որ ամենապատուական և ամենախիղալի պանիր է, որոյ օրինակը չի գտնուիլ նոյն հրապարակում։ Տէր հայրը իւր կասկածանքը փարատելու համար—ասում է.

—Մեզանում շատ շատ պաս է լինում, ուրեմն մեր գնած պանրի իւղը գո՛նէ եօթն անգամ քաշած պիտի լինի, որ մեզ համար պաս չհամարուի։

—Քէ՛շիշ աղայ, մասաղա վէրդ է որ 7 չէ, 14 անգամ է քաշած այս պանրի իւղը (միամիտ կաց), որ իւղը քաշած չլինի, քեզ չեմ ծախիլ։

ՎԱՃԱՌԱՆՈՑ

	Ր.	Կ.
Ցորեն 1 տեսակի, խալվարը	24	
,, 2 — —	22	
,, 3 — —	20	
Գարի, խալվարը	14	
Բրինձ, լիտրը		50
Շաքար, փութը	9	75
Բամբակ, տեղական սերմից	2	10
,, ամերիկ. սերմից	2	40
Բուրդ, իլտրը	2	
Ջամիչ, խալվարը	80	
Հաւ		50
Հնդկահաւ	2	
Կաքաւ		30
Ձէթ կտաւատի ֆ.		18
Տիրրախտ, ֆ.		25
Ածուխ, տոպրակը.		90
,, լիտրը		
Ձուկը, Զանգուի ֆ.		20
,, Սևանայ ֆ.		14
Ձու, 100ը	1	

Յատենի Սինօդի Սրբոյ Էջմիածնի նշանակեալ է մրցախօսութիւն 'ի 27 և 'ի 28 այսր ամսոյս, վասն տալոյ կապալաւ զգիւղօրայս Աթոռոյ Էջմիածնի Վաղարշապատ, Օշական, Մաստարայ, Եղուարդ և Մօղնի. իսկ ի 23 և ի 24 ամսոյս՝ վասն տալոյ կապալաւ զվարելահողս Գետարգելայ և զքահրայս Գօղդ գիւղօրէից զխոտատեղիս և զվարելահողս վանիցըն Գեղարդայ։

ЧАСТНЫЙ ПАНСІОНЪ КАМСАРАКАНА

ОБЪЯВЛЯЕТЪ

что 15 Іюня сего года выѣдетъ на дачу въ Дарачичагъ. Желающимъ опредѣлить дѣтей на каникулярное время въ пансіонъ нужно заявить до 5-го Іюня сего года.

ՎԱՃԱՌՎՈՒՄԷ

Պետերբուրգի պրիդվօրնիյ վարպետի շինած՝ բոլորովին նոր՝ տղամարդի ԹԱՄԲ կաբուրներով, սանձով և մունդշտուկով-90 մթի. որին տուած է ճանապարհածախքով 116 մթ. Հարցնել տեղական գանձապահի (казначей) տանը։

ՕԴԱՅՈՅՑ

2 ին ՄԱՅԻՍԻ		
Առաւօտ	Կէս օր	Երեկոյ
արև		
Րէօմիւրի ջերմաչափով		
† 12	†15	11

3 ին ՄԱՅԻՍԻ		
Առաւօտ	Կէս օր	Երեկոյ
արև		
Րէօմիւրի ջերմաչափով		
† 12	† 17	† 12

4 ին ՄԱՅԻՍԻ		
Առաւօտ	Կէս օր	Երեկոյ
ամպամած		
Րէօմիւրի ջերմաչափով		
† 15	† 20	† 12

Պատիւ ունիմ յայտնել Երևանի յարգելի հասարակութեան, որ Ապրիլի 15-ից, պակասացրել եմ իմ բաղնիքիս մէջ մինչև հիմայ եղած լողանալու գները. այն է կանանց և մարդկանց համար նշանակել եմ 15 կոպէկ, իսկ միայն սառը ջրով լողացողները պիտի վճարեն 5 կոպ.

Համբարձում Եղիազարեանց։

ՄԱՅԻՍ ԱՄՍԻ ՏԱԿՍԱՆ

	Կ.
ՄԻՍ	
Տաւարի, ֆունտը	8
Ոչխարի —	10
Խոզի —	10
Գառան —	9
ՀԱՑ	
Հասարակ, լիտրը	24
Ֆօն-դէր-Նօնէի ալիւրից ֆ.	
ԻՒՂ	
Հալած, ֆունտը	35
Կարագ —	30
Դմակ —	
Ճրագուէ մոմ ֆ.	20
Օճառ, տեղական ֆ.	16
— Թիֆլիզի —	14
Նաւթ ֆ.	6

Կամսարականի մասնաւոր Պանսիոնը յայտնում է, որ այս թուի Յունիսի 15-ից, կգնայ ամարանոց ի Դարաչիչագ։ Անձնպարոնները, որոնք կկամենան իւրեանց որդիքը ամառուան արձակուրդների ժամանակ տալ պանսիոնը, պիտի յայտնեն մինչև յառաջիկայ Յունիսի 5-ը սոյն թուի։

По случаю выѣзда въ квартирѣ Смотрителя магазина Олегова, на второй улицѣ въ домѣ Захара Степанова продаются по выгоднымъ цѣнамъ, мебель, желѣзныя новыя кровати, мѣдная посуда, ванны и другія хозяйственныя вещи.

Продается совершенно новое мужское сѣдло съ кабурами, уздечкою и мундштукомъ, работы придворнаго С. Петербургскаго мастера за 90 р., за которое заплачено съ пересылкою 116 р. Спросить въ квартирѣ мѣстнаго уѣзднаго Казначея. 1—3

Խմբագիր—Հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Дозволен цензурою 18 Мая 1883 года. Г. ЭРИВАНЬ Типографія Эмина Теръ—Григорянцъ.